



† Աղիքանից Մամրասևն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1911 թիւը նշանաւոր եղաւ հայութեան համար իր կորուստ-ներով:

Միմեանց ետևից թողին այս աշխարհը յիսնամեայ նշանաւոր հրապարակախօս Պետրոս Սիմէօնեանցը, հայ մեծանուն բարեգործ Ալէքսանդր Մանթաշեանցը և ի վերջոյ մեր ականաւոր գրագէտ Ղազարոս Աղայեանցը, երեքն էլ իրանց ասպարէզ-ներում խոշոր մարգիկ, որոնց տեղը բռնող չկայ տակաւին:

Աղէքսանդր Մանթաշեանցը սկզբում մի փոքր վաճառական, իւր առևտրական տաղանդով կարողացաւ շուտով աչքի ընկնել վաճառական աշխարհում՝ իր յաջողութիւններով և ինչպէս հայ վաճառականի ինքնուրոյն յատկութիւնն է, փայլեց հայ ազգի մէջ իր մեծամեծ բարեգործութիւններով մեծ մասամբ կրթական գործի համար, Բայցի բազմաթիւ ուսանողներից, որոնք ուսանում էին Ա. Յ.-ի հաշուով, Մանթաշեանի առատաձեռնութեամբ են կառուցւում էջմիածնի կաթողիկոսարանը, Ներսիսեան դպրոցի հոյակապ շէնքը և դեռ ապագայում պէտք է առաջ գան նորանոր ձեռնարկութիւններ հանգուցեալի կտակաւանդութեամբ:

Հանգ. Մանթաշեանի թաղումը կատարուեց Թիֆլիսում խիստ մեծ շքով և ամեն կողմի հայերի պատզամաւորութիւնների ու Թիֆլիսի բոլոր հայ հաստատութիւնների մասնակցութեամբ. Թաղուցց վանքի եկեղեցու գաւթում իր սեպհական գետնի վերայ:

Կ. Պօլսի նախկին պատրիարք ամեն. Օրմանեան սրբազնի կողմից հանգ. Մանթաշեանի թաղմանը հեռագրով ներկայացուցիչ էր նշանակուած թերթիս խմբագիր Գիւտ. աք. Աղանեանցը:

* *

Պետրոս Սիմէօնեանցը նոր նախիջևանին կից մեծ Սալա գիւղիցն էր և իր ուսումը ստացել էր Դորբատի համալսարանում, նա գալով Կովկաս՝ երկար ժամանակ ուսուցիչ եղաւ Ներսիսեան դպրոցում և միաժամանակ տեսչի պաշտօնակատար, վարեց «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագրութիւնը մինչև այս թերթի դարարումը:

Պետրոս Սիմէօնեանցը նշանաւոր էր նրանով, որ նրա մէջ համումունքը իդէալական գագպթնակէտին էր հասել. նա իր կիսադարեան հրապարակախօսական գործունէութեան մէջ պաշտպանում էր այն կարծիքը, թէ Հայոց ազգի փրկութիւնը դպրոցի և եկեղեցու, լեզուի և կրօնի մէջ է և իր այդ դաւանանքը անընկնծի յամառութեամբ ու եռանդով պաշտպանեց մինչև իր վերջին շունչը. այդ հոգով էլ կրթեց և արտադրեց ամրողջ սերունդներ. Պետրոս Սիմէօնեանցը յայտնի էր իրքեւ ընտրեալ խելօքներից մէկը, որի խորհուրդներից երկար տարիներ օգտառում էին Թիֆլիզի առաջնորդներ և էջմիածնի կաթողիկոսներ ազգային դպրոցական և եկեղեցական խնդիրներում:

Սիրաժամանակ նա մի բարի, անընչասէր և համեստակենցադ մարդ էր. մարդ չկար, որ իր կեանքում վշտացած լինէր նրանից. իր այս բնաւորութեամբ ամենքը սիրում էին նրան և մանաւանդք թէ պատկառում նրանից.


Նրա մահը, թէպէտ արդէն զառամելութեան մէջ, ընդհանուր վիշտ պատճառեց ամենքին. նոյն իսկ իր գաղափարական հակառակորդները համակրական յօդուածներ նուիրեցին այդ հոգիացած հրապարակախօսին: «Մշակ» լրագիրը, որի հետ մի քանի տասնեակ տարի գաղափարի կոիւ էր ունեցել նա, մի ջերմ յօդուած նուիրեց Սիմէօնեանցին, դրուատելով նրա այդ յատկութիւնները: Թաղումը կատարուեց բոլոր կուսակցութիւնների մասնակցութեամբ. Թիֆլիսի Հայ մամուլը ձեռներէցութեամբ պ. Տիգրան Նազարեանի՝ ի յիշատակ հանգուցեալի պատկի փոխարէն հրատարակեց մի համար «Մեղու Հայաստանի» նուիրուած ամբողջապէս Պետրոս Սիմէօնեանցին:

Սիմէօնեանցի թաղմանը կ. Պոլսից պատրիարքական տեղապահ Ամեն. Եղիշէ արքեպիսկոպոս Դուռեանը հեռագրով ներկայացուցիչ էր նշանակել թերթիս խմբագրին:

* *

Պակաս կորուսա չէր հայ գրականութեան համար և յայտնի գրագէտ Ղազարոս Աղայեանի անակնկալ մահը, որ տեղի ունեցաւ անցեալ յունիսին: Աղայեանցը վախճանուեց «Հորիզօն»-ի խմբագրատուն գնալիս, որի մերձաւոր աշխատակիցներից մէկն էր նա վերջին տարիներս:

Աղայեանը ուսել էր ներսիսեան Դպրոցում և իր փոքրիկ պաշտառվ, բայց սեպհական տոկուն աշխատասիրութեամբ, այնուիսի մեծ հմտութիւն էր ձեռք բերել հայ լեզուի մէջ, որ իր կեանքը մեծ մասը նուիրեց հայ լեզուի մշակման և հայ մանուկների դաստիարակութեան գործին. նա սկզբում «Մեղու Հայա-



† Պազմուս Աղայեան

տանի» լրագրի գրաշար էր և միաժամանակ աշխատակցում էր յիշեալ լրագրին. այնուհետև նա սկսեց ուսուցչութիւն անել հայոց ծիսական դպրոցներում և այդ ասպարիզում նա ցոյց տուեց լաւ մանկավարժի ընդունակութիւն. Մանուկներին հայ լեզուն ուսուցանելու գործը այնքան սիրելի էր նրան, որ նրանց համար նա պատրաստեց հայոց լեզուի մի շարք ընտիր դաստիքեր և հրատարակեց մանկական ընթերցանութեան համար բաւական թուռվ հեքիաթներ ու բանաստեղծութիւններ գողարիկ աշխարհաբար լեզուով, որոնք լոյս տեսան թէ զանազան ամսագիրներում և թէ առանձին գրքոյներով: Հրատարակեց նաև մի քանի գրքոյներ հայկական հնչիւնների մասին և մտցնելով իր դասագրերի ու հրատարակութիւնների մէջ ւ-ի ուղղագրութիւնը՝ մինչև իր կեանքի վերջը նա եռանդուն կերպով պաշտպանեց իր այդ նորամուծութիւնը:

Ութունական թուականներին նա մի քանի տարի վարեց թիֆլիզի թեմի հայ ուսումնարանների. թեմական տեսչի պաշտօնը: Մի խօսքով Աղայեանը իր ամբողջ կեանքը նուիրեց ուսուցչութեան և հայ մանուկների դաստիարակութեան գործին և հիմք գրեց մանկական գրականութեան հայոց մէջ և դրա համար էլ իր մահը ցնցեց ամբողջ հայութիւնը առանց կուսակցութիւնների խարութեան և մահից յետ արժանացաւ այնպիսի ցոյցերի և յարդանքների, որոնց արժանի են միմիայն մի ազգի խոշոր անձնաւորութիւններ:

Հանգուցեալը աշխատակցել է նաև Շումայշ-ին, ուր տպաւեց նորա և Ռ. Խանազատեանի թարգմանութեամբ թէլլամիի «Հարիւր տարի յետոյ» նշանաւոր վէտի հայ թարգմանութիւնը, որ ստկայն կիսատ մնաց խմբագրութիւնից անկախ պատճառներով:

Այս մեր կորուստներն էին այս տարուայ առաջին կիսին, որ ուրիշ կողմերից էլ միսիթարական ոչինչ չէ ներկայացնում հայութեան համար:

Կաթողիկոսական խնդիրը այնպէս է յուղել մտքերը, այնպէս գրգուել կրքերը, մամուլը մի այնպիսի զիրք է քոնել հրապարակում երեցած աչքի ընկնող ընտրելինների վերաբերմամբ, որ բարիս բուն նշանակութեամբ էլ ոչ մի հեղինակութիւն չթողին եպիսկոպոսների շրջանում, ամենըն էլ բամբասուեցան, ամենըն էլ բարդուած բազմազան երևակայական պակասութիւններով կեղտոտուեցան: Սպասենք, որ առողջ դատողութիւնը, լուրջ կըշռադատութիւնը յաղթէ ամեն տեսակ կրքերին և արժանաւորնե-